

ԱՐՏԱԿԱԶԴ ԱՐԱՐԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ



Ծնվել է 1980 թվականի նոյեմբերի 18-ին Երևանում:

1987-1997թթ. սովորել է Երևանի թիվ 185 միջնակարգ դպրոցում:

1987-1993թթ. սովորել է Երևանի Սայաթ-Նովայի անվան թիվ 2 երաժշտական դպրոցում:

1997-2001թթ. ընդունվել և ավարտել է Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիայի տնտեսագիտական ֆակուլտետի հաշվապահական հաշվառում և աուդիտ բաժինը՝ ստանալով տնտեսագետ - հաշվապահ - ֆինանսիստի որակավորում: 2001թ. ընդունվել է ՀԳԱ մագիստրատուրան և, 2003թ. գերազանց առաջադիմությամբ ավարտելով, պաշտպանել է մագիստրոսական թեզ, ստացել տնտեսագիտության մագիստրոսի աստիճան:

2003թ. ուսումը շարունակել է ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչության Կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտի ասպիրանտուրայում:

2006թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հարկային բեռի կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Մի շարք գիտական հոդվածների հեղինակ է: Բազմիցս մասնակցել է Հայաստանում և արտերկրում կազմակերպվող գիտաժողովների, սեմինարների և համաժողովների, հանդես է եկել զեկույցներով՝ փոքր և միջին բիզնեսի, ՏԻՄ-երի, համայնքների զարգացման և հարկային համակարգի կառավարման վերաբերյալ:

2005-2009թթ. ճապոնիայում, Բուլղարիայում, Հունաստանում, Իտալիայում, Գերմանիայում, Շվեդիայում և Ավստրիայում անցել է մի շարք վերապատրաստումներ:

1998-2004թթ. ուսմանը զուգահեռ զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ՝ տրանսպորտի և ծառայությունների բնագավառներում:

2005-2006թթ. աշխատել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամում որպես ֆինանսական աջակցության ծրագրերի պատասխանատու, 2007թ.-ից՝ որպես որակի կառավարող, գործադիր տնօրենի խորհրդական, գործադիր տնօրենի տեղակալ:

2005-2008թթ. ընտրվել է Աջափնյակ թաղային համայնքի ավագանու անդամ:

2009թ. մայիսի 31-ին ընտրվել է Երևանի ավագանու անդամ:

2009թ. Աջափնյակ թաղային համայնքի ավագանու որոշմամբ պարգևատրվել է 2005-2008թթ. Երևանի Աջափնյակ թաղային համայնքի ավագանու օրինակելի անդամի պատվոգրով:

Ամուսնացած չէ: